րեկան հասակումն է, որ թէ իրենց բնաւորութիւնն է փոխում
գէպի լաւը և թէ իրենց գործերի մէջ փոփոխութիւն է լինում:
Միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են:



Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

30 00

Նոյեմբեր ամսուայ անունը ծագում է լատիներէն Novembre քառից, որ նշանակում է իններորդ: Հռովմայեցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս հիմա, այլ Մարտ ամսից: Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ: Իսկ վրաց-տանում, որովհետեւ այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիօրգ-օբայ, կամ Գիօրգօբիս-թվէ, որ նշանակում է Գէորգայ-տօնի ամիս:

- 0ր 8
- | | | |
|-------|---|----|
| 1 14 | Գ. 4. Ս. Ակիփսիմեայ եպիսկ. Յովսէփայ քահ. Ալիթա- | 18 |
| | լայ սարկաւազին և Պղատոնի վկային: | |
| 2 15 | Դ. 7. Պահք: | 19 |
| 3 16 | Ն. 7. Ս. հայրապետացն Մեսրոպիանոսի, Աղէքսանդրո- | 20 |
| | սի, Պօղոսի խոստովանողին և Ս. նօտարացն Մարկիանոսի | |
| | և Մարտիրոսի: | |
| 4 17 | Ուր. 7. Պահք: Յերեկոյեան նախատօնակ: | 21 |
| 5 18 | Շր. 7. Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և | 22 |
| | ամենայն երկնային զօրացն: | |
| | Յ վերջին քառորդն լուսնի: Խառն էլ: | |
| 6 19 | Մ. Կիր. Է. Կիր. զկնի Ս. Խաչի: | 23 |
| 7 20 | Բ. Է. Ս. Մելիտոնի Անտիօքայ հայրապետին և Մինա- | 24 |
| | սայ եղիպտացւոյն և միւս Մելիտոսի եպ. Բուրայ քահա- | |
| | նային և Շինու սարկաւազին: | |
| 8 21 | Գ. 4. Ս. Գիմիտրեայ վկային և Բասիլիկոսի քահանային: | 25 |
| | Լատ. Ընծալումն Ս. Աստուածածնի: | |
| 9 22 | Դ. 4. Պահք: | 26 |
| 10 23 | Ն. 7. Ս. Գուրխասայ, Սամունասայ, Աբիբայ սարկաւա- | 27 |
| | զին, Ռամանոսի միանակեցւոյն, Մանկան խոստովանողի | |
| | և Հիւսիքոսի զինաւորին: | |
| | Յ Արեգակն ի Ազնոյաւորն մտանէ: | |
| 11 24 | Ուր. 7. Պահք: | 28 |
| 12 25 | Շր. 7. Ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի: | 29 |

0ր 8

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

- Յ Մնունդն լուսնի: Հառն էլ:
- | | | |
|-------|--|----|
| 13 26 | Մ. Կիր. Է. Կիր. զկնի Ս. Խաչի: | 1 |
| 14 27 | Բ. Է. Ս. Աբրահամու և Խորենայ անարծաթ բժշկացն, | 2 |
| | Կողմայի և Դամիանոսի և Աստուածատրոյ վկային: | |
| | Յունաց և Ռուսաց՝ Բարեկենդան Մննդեան պահոց: | |
| 15 28 | Գ. Է. Ս. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալի- | 3 |
| | նիկոսի և Դոմեանայ վկային: | |
| 16 29 | Դ. 4. Պահք: | 4 |
| 17 30 | Ն. 7. Ս. Անդրիանոսի և Կնոջն նորա Անատօլայ, Թեո- | 5 |
| | դորոսի և Ելեթիւրոսի վկային: | |
| 18 1 | Ուր. 7. Պահք: | 6 |
| 19 2 | Շր. 7. Տօն ամենայն Սրբոց—Հնոց և Նորոց, լալտից և | 7 |
| | անլալտից: | |
| | Յ Առաջին քառորդն լուսնի: Յրորոն էլ: | |
| 20 3 | Մ. Կիր. Է. Ս. Կիր. զկնի Ս. Խաչի: Բարեկենդան Յիսնա- | 8 |
| | կի պահոց: Յերեկ. նախատօնակ: | |
| 21 4 | Մ. Է. Ընծալումն Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն:— | 9 |
| | Եւս Յունաց և Ռուսաց: | |
| 22 5 | Գ. Է. 2. օր Յիսնակի պահոց: | 10 |
| 23 6 | Դ. Է. 3. օր Յիսնակի պահոց: | 11 |
| 24 7 | Ն. 4. օր Յիսնակի պահոց: | 12 |
| 25 8 | Ուր. 4. օր Յիսնակի պահոց: | 13 |
| 26 9 | Շր. 7. Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայ- | 14 |
| | րապետին և Միլոտայ եպիսկոպոսին: | |
| | Յ Լրումն լուսնի: Բ. Է. Էլ: | |
| 27 10 | Մ. Կիր. Է. Ս. Կիր. Յիսնակի: | 15 |
| 28 11 | Բ. Է. Ս. Կուսանացն Յուլիանիայ և վալիուհոյ: | 16 |
| 29 12 | Գ. Է. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարագրոսի, Պրո- | 17 |
| | պոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և ալոց աշակերտացն | |
| | Պօղոսի: | |
| 30 18 | Դ. Է. Պահք: | 18 |
- Այս ամսուայ 1-ից մինչև 30 ը օրը պակասել է 1 ժ. 19 ր.

ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր.—Ազնոյաւորն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շուտ գտնող:

առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, վարուող, աշխատասէր, 'ի բնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իւր ունեցած լաւ լատկութիւններն համեմատ անչափ ինքնասէր:

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեալ և աշխուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ: Գլխաւոր պակասութիւնը իւր կասկածոտ բնաւորութիւնն է:

Նոյեմբերին ծնուածներն առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր: 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խորին ծերութեան կը հասնին:



ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 օր

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական decembre բառից, որ նշանակում է տասներորդ: Սլաւոն անուանեց ամիսների հիմնադիր Հռոմուլոսը տարուալ տասներորդ ամիսը: Մեր նախնիք այս ամիսն անուանել են Փաղոց: Որովհետև Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Մանգեան տօնը, այս պատճառաւ այս ամսին վրացիք անուանել են Քրիստիչօբալ, կամ Քրիստիչօբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Մանգեան ամիս:

Օր	Ն	
1	14	Եշ. Բի. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տոռոմն- 19 նալ եպիսկոպոսին:
2	15	Ուր. 43. Պահք. Յերեկոյեան նախատօնակ: 20
3	16	✠ Շր. 43. Ս. Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց 21 ԹԱԴԵՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՍԷՈՍԻ.
4	17	✠ Կիր. 73. Բ. Կիր. զկնի Յիսնակի: 22 Ե Վերջին քառորդն լուսնի: Զաքէր Հոգեւոր:
5	18	Բշ. 73. Ս. Գեորգիոսի եպիսկոպոսին և Մերկեւիոսի զի- 23 նաւորին:
6	19	Շր. 73. Ս. ՈՐԳԱՐՈՒ Նախաժկալ և անդրանիկ թաղաւոր- 24 րին մերոյ:
7	20	Դշ. 73. Պահք. 25
8	21	Եշ. Բի. Ս. Հարցն Եգիպտացոցն, Պողոսի, Պողայ, Մակա- 26 րայ, Եւագրի, Յովհաննու Գրեցեոյն, Յովհաննու կարճա- հասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապի- օնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց Ս. հարցն: Յեր. նախատ.
9	22	✠ Ուր. Բի. Պահք. Տօն ՅԼՈՒԹԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ 27 ՅԱՆՆԱՅԷ.

- Յամուտ և արևադարձ. ցերեկն սկսանի երկարիլ և գիշերն կարճանալ:
- 10 23 Ծբ. 43. Ս. Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ հայ- 28
րապետին:
- 11 24 ✠ Կիր. 43. Գ. Կիր. զկնի Յիսն. Բարեկ. ս. Յակովբայ պահոց: 29
- 12 25 Բշ. 43. Պահք. Ս. Սիրնասայ, Երմոգինեայ և Գրաբոսի և 30
կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալէքսիանոսի:
Լատ. Ծնունդ Տեառն:
- 3 Ծնունդն լուսնի: Զիւնիւն Էլիսի:
- 13 26 Գշ. 43. Պահք. Ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Շմաւոնի 1
ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ Ներուսաղէմ, Պողի
կարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն՝ որք լու-
րեկէս կատարեցան:
- 14 27 Գշ. 43. Պահք:
- 15 28 Եշ. 43. Պահք. Ս. Եւտրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիո- 3
սի, Ուփրեստէսի և Մարգարիտի:
- 16 29 Ուր. 43. Պահք. Յերեկոյին նախատօնակ:
- 17 30 Ծբ. 43. Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի 4
ճգնաւորին և Մեկիտոսի եպիսկոպոսին:
- 18 31 ✠ Կիր. 43. Գ. Կիր. զկնի Յիսնակի: 6
Առաջին քառորդն լուսնի: Բաւնչ Էլիսի:
- 19 1 Բշ. 43. Ս. հայրապետացն Իգնատիոսի, Աղղէի և Մարու- 7
թայ եպիսկոպոսին:
Ըստ նոր տոմարի Տարեմուտ և լուսնարի 1-ն 1917 թ.
Լատ. տօն Տնօրէնութեան Տեառն:
- 20 2 Գշ. 43. Սրբոց Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոփնայ վկ. և 8
չորից զինուորացն Բասոսի, Եւսերի, Եւտիգի և Բասիլիկեայ:
- 21 3 Գշ. 43. Պահք:
- 22 4 Եշ. 43. Ինչոսի, Դոմինի և Գղերիկոսի քահանային և եր- 10
կուց բիրոցն, որք ալիւքան եկեղ. Նիկոմիդացւոց:
- 23 5 Ուր. 43. Պահք. Յերեկ. նախատօնակ:
- 24 6 Ծբ. 43. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն, 12
Ռուսաց ճրարալոց Ծննդեան. Լատ. Յստնութիւն
Տեառն:
- 25 7 ✠ Կիր. 43. Ե Կիր. զկնի Յիսնակի Յերեկ. նախատօնակ: 13
Ռուսաց և Յունաց Ծնունդ Տեառն:
- 26 8 Բշ. 43. Ս. Ստեփաննոսի նախապկային և առաջին մար- 14
տիրոսին: Լանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս եկեղ.
Տփիսիսայ՝ որ ի լանապատին կուսանաց, որ ամիոփի մաս
նչխարաց—աջ Ս. Ստեփաննոսի Յերեկ. նախատօնակ:
Յունաց և Ռուսաց՝ 2 օր Ծննդեան:

- Ք Լրումն լուսնի. Գաւառնչ Էլիսի:
- 27 9 Գշ. 43. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի Ռուս. 3 օր Ծննդ: 15
- 28 10 Դշ. 43. Պահք. Յերեկոյին նախատօնակ: 16
- 29 11 Եշ. 43. Ս. որդւոցն Որոտման Յակովբայ առաքելոյն և 17
Յովհաննու Աւետարանչին: Բարեկենդան Ծննդեան պահոց:
- 30 12 Ուր. 43. 1 օր. Ծննդեան պահոց: 18
- 31 13 Ծբ. 43. 2 օր. Ծննդ. պահոց: Ս. Բարսեղի հայրապետին և 19
եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն Սեղբեսորոսի Հոովմայ
հայրապետին և Աբբա Եփրեմի Խորին Ասորւոյ:
- Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 0 փ. 37 ր.

ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱՆՈՒԹԻՒՆԸ

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր. — Այժեղջիւրն. Այս համաստեղութեան տակ
ծնուած տղան թէև աչնքան բախտաւոր չի լինի և ձախորդութիւն-
ներ շատ կը քաշէ, բայց ճշմարտասէր, թեթեամիտ, եռանդոտ, չար,
ազան և անբարիշտ կը լինի: Իւր մասին մեծ համարում ունի. թէև
համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ,
որովհետև իւր ամեն բաւականութեանց սիրահար է:

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթեամիտ, ջանել ժամանակը
վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ
խառնակիչ. պսակուած ժամանակին ևս խանդոտ՝ թէև այս պակա-
սութիւնները միշտ աշխատում է ծածկել. Եթէ չափաւոր և զգուշ
լինի, մինչև խորին ծերութեանը կը հասնի:

Գեկտեմբերին ծնուածները առհասարակ իրանց գործերում
խելօք են և խորհուրդների մէջ զգուշ, սիրում են գիտութիւններ,
և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութեան: 25 տարեկան
հասակում հիւանդանալուց զգուշանալու են:

Ծանօթութիւն. Երբեմն պատահում է, որ «Տարեցոյց»-իս մէջ
դիտեղուած եղանակի գուշակութիւնները ճշգրտեւ ուր չեն կատար-
վում, դրա պատճառը պէտք է վերագրել աշխարհագրական տեղա-
կան դիրքին և օդին նոյթարանական զանազան անակնկալ ու արտա-
սովոր երևոյթներին, նամանաւանդ որոշ ժամանակներում չալտնի
ուղղութեամբ փչող քամիները—ցիկլոնների և երկրագնդի մթնոլորտի
լեղաշրման (пертурбация) դէպքերում:

Մ. Ալխ...

ՅԱԻԵԼՈՒԱԾ

«Ժողովրդավան. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԵՑՈՅՑԻ» 1916 ԹՈՒՆԿԱՆԻ

I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ս. ԷՋՄԻԱՄՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց Տ. Տ. Գէորգ Ե. ընտրեալ ի 13-ն ղեկաւ 1911 թ. և Օձեալ ի 1-ն լուսիսի 1912 թ.

1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՏԱՆԵ ԿԻՂԻԿԻՈՑ—Սահակ Բ.

ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր):

2) ՊԱՏԿԵՐԱՐՓՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ—(Թափուր):

Ե. ՊՈՒՍՑ—Զաւէն արքեպիսկ.

3) Ս. ԷՋՄԻԱՄՆԻ ՍԻՆԱՂ

Նախաձեռն Գուրիկ արքեպ. Տ. Մալսիսեան:

» Մալթէոս եպ. Մալթէոսեան:

» Սահակ վրդ. Ամատունի:

» Բարդէւն վրդ. Ս. Երեմիանց:

Պրովորք Փ. Մելիք-Փարսաղանեան:

4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱՆԵՐ

» ԵՐԵՒԱՆԻ.—Փոխանորդ Թմակալ առաջնորդի Խորէն եպ. Մուրադբէգեան:

» ՎԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԵՒԻ.—Առաջ. Մեարայ եպ. Տէր-Մովսիսեան:

» ՂԱՐԱԲԱՂԻ.—Փոխան. Թեմ. առաջ. Զաւէն վրդ.

» ՀԱՇՏԱՐԻՍԵՆԻ.—Փոխանորդ Թեմ. առաջ. Միլիթար եպ. Տէր-Մկրտչեան:

» ՇԱՄԱԽԻ.—Սոսոյնորդ Թէմ. (Թափուր):

» ԲԵՍԱՐԱԲԻՈՑ.—Առաջնորդ Թեմ. Ներսէս արքեպիսկ. Խուզալեղեանց:

ԱՏՐԱՍԱԿԱՆԻ.—Կառավարիչ Թէմ. Ներսէս եպ. Մելիք-Փանդեան:

» ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, (Թափուր):

» ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ.—Առաջնորդ Գէորգ եպիսկ. Իսթիւհեան.—Նստում է Մարտի 2 քաղաքում, որտեղ և հայոց մատուակայ—Ս. Յարութիւն: Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ Փարիզում, Մանչեստրում և Սուչովայում:

» ԱՄԵՐԻԿԱՅԻ.—Առաջնորդը (Թափուր) նստում է Ութթ քաղաքում, որտեղ կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ: Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Յորքում, Բոստոնում, Պրովիտենսում, Լորէնսում, Կալիֆորնիայում, Չիկագոյում և Փրեզնոյում:

Տաճկաստանի Թեմերի մասին տեղեկութիւնները բոլորովին անկարող եղանք տալու:

II. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԵՒԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

1916 թ. երկրաշնչիս վրայ երեք անգամ արեւի և երեք անգամ լուսնի խաւարումներ կենկատուին, որոնցից.

1) Արեւի խաւատար խաւարումն տեղի կունենայ լուսնարի 21-ին, որը կսկսուի ցերեկուայ 4 ժամ 0 րոպէին և կվերջանայ գիշերուայ 9 ժամ 4 րոպէին:

2) Մանեկատար խաւարումն արեւի տեղի կունենայ լուսնարի 17-ին, որը կսկսի գիշերուայ 2 ժամ 0 րոպէին և կվերջանայ 7 ժամ 17 րոպէին առաւօտեան:

3) Մասնատար խաւարումն արեւի սկիզբից 11-ին 3 ժ. վերջը 12 ժ. 9 ր. երեկ.

4) Մասնատար խաւարումն լուսնի 7-ին

լուսնարի, սկիզբը 10 ժ. 55 ր. առավերջը 11 ժ. 56 առ.

5) Մասնատար խաւարումն լուսնի 2-ին լուսնարի, սկիզբը 6 ժ. 20 ր. գիշ. վերջը 8 ժ. 43 ր. առ.

6) Լիակատար խաւարումն 26 ղեկա. սկիզբը 8 ժ. 21 ր. առ., վերջը 12 ժ. 9 ր. ցերեկուայ:

Այս բոլոր խաւարումները կնկատուին Արեւմտեան Եւրոպայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Մեծ Ատլանտեան և Հարաւային սառցեայ ովկէանոսներին կից գտնուած երկրներում: Իսկ Կովկասում այս խաւարումներից ոչ մինը չէ կատուի:



III. ՏՕՄԱՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՎԱՐ, ԶԱՏԿԻ ԼԱԶՈՒԱԴԻՊԵՐ

Զատիկի տօնը քրիստոնեայ եկեղեցիները կատարում են Նիկիոյ ժողովի (325 թ.) սահմանած կանոնադրութեան համաձայն մարտ ամսի մէջ ծնված լուսնի լրումից յետոյ պատահած առաջին կիրակի օրը։ Այդ պատճառով բոլոր միա Նշանակված տօները զատկական տօնի հետ մեծ կապ ունեն, մանաւանդ հայկական նախնական եկեղեցու բոլոր այն տօները, որոնք շարժական են, բացի Ծննդի, Տեանընդառաջի, Աւետման, Երեց-ամաց և Յղութեան տօներէն։

Յունական եկեղեցին երբ Զատիկի տօնը կատարում է մարտի 22-ին, այդ դէպքում նախ եկեղեցու Տեառնընդառաջը ընկնում է Բարեկենդանի կիրակի օրը։ Որպիսի տօնը, սակայն, Մեծի պահոց տխուր օրերին չկատարելու պատճառով, յետաձգում են Բարեկենդանի շաբաթ օրը։

Իսկ կաթոլիկ եկեղեցին, երբ Աւետարան

տեաց տօնը ընկնում է Զարչարանաց կամ Զատիկի շաբաթը, նոյնը այդ տօնի կատարումը յետաձգում է Զատիկի հետեւեալ շաբաթը։

Անցեալ 1915 թ. Զատիկը, որ կատարվեց մարտի 22-ին, շատ հազուադէպ է, որովհետեւ այսպիսի վաղ կատարվող Զատիկ վերջին անգամ միայն տեղի է ունեցել սրանից 312 տարի առաջ՝ 1603 թ., այն տարին՝ երբ հայերը գաղթում էին դէպի Ջուղա։

Այսուհետեւ նման հազուադէպ Զատիկներ կը պատահեն 2010, 2105, 2437, 2532, 2627, 2959, 3054, 3149, 3481, 3576, 3671, 4003, 4098, 4193, 4525, 4620, 4715, 5047, 5142, 5237, 5569, 5664, 5759, 6091, 6186, 6281, 6613, 6708, 6803, 7135, 7230, 7325, 7657, 7752, 7847, 8179, 8274, 8369, 8701, 8796, 8891, 9223, 9318, 9413, 9745, 9840, 9935 և 10267 թուականներին։

Մակ. Չմշկ...

IV. ՕՂԵՐԵԻ ՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

ՔՅԵՄԵՐՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1916 ԹՈՒԱ
ԿԱՆԻ ՄԱՍՆԸ

Ըստ տիեզերային մարմինների շարժման, նրանց դիրքի ուղղութեան, երկրագնդի վրայ ունեցած ազդեցութեան, ինչպէս և Տանտալէրի, խեցգետին կենդանակերպ համաստեղութիւնն լինելով, գուշակվում է, որ 1916 թ. անցնելու է։

Պաղարեւոթեան կողմից, ցոլանով և ամենայն պտուղներով թէև պարարտ ու առատ, սակայն շատ թանգ և ճեղ տեղ էլ մորեխը տալով, անասունների կէրը շատ պակաս։

Նշանակները.— Զմեռը՝ սկզբում կարկառով ցուրտ ու ձնառատ։ մէջը տաք, վերջը բարեխառն։ Գարունը՝ հողմախառն, որոտալից անձրևներով և մինչև յունիսը ցուրտ։ Աշունքը ցուրտ, և երկարատև։

Առողջութեան կողմից, պէտք է աշխատել սակաւակեր լինել։ Այս տարի մեծ մասամբ ջերմութիւնից առաջացած հիւանդութիւններ առաջ կը գան, մանաւանդ զօղը կը շատանայ։ Ծեղերին ու երիտաններին մեծ հարուած կը հասնի։ Իսկ ըստ Դեմոկրատեսի պէտք է զգուշանալ որ մահտարածամ չընկնի։ Աղբիւրների ջրերը պակասելով, եղներ էլ շատ կը սառնեն։

Կենցաղավարութեան կողմից, եղբայրների ու սրտակիցների մէջ արաձայնութիւն, զրազէտների ու վառապանների մէջ խաբէութիւն ու

հենգութիւն, որից ամենքը մեծ դժուարութիւն կը կրեն։

Արտասովոր երևոյթներից՝ երկրի վրայ մեծ արտմութիւն կը գայ։ շատ տեղերում պատերազմ, կռիւ ու վեճեր երևան կը գան, մանաւանդ զանազան տեսակ անձանց կողմից իրարից թագաւորի դէմ։ Իսկ արքունի ծառայողներին՝ մեծ վնաս ու նեղութիւն է հասնելու։

Նշանակի ամենաճիշտ գուշակութիւնը օդաչափի միջոցով։

Պարզ եղանակ այն ժամանակ է սկսվում, երբ օդաչափի բարձրութեան չափը միլիմետրով հասնում է սոյն քաղաքներում նշանակուած հետեւեալ թուերին։

Թիֆլիս	731	Օդեսսա	762
Բագու	766	Վարշավա	756
Բաթում	756	Քերչ	767
Փանձակ	728	Մոսկուա	750
Լենքորան	769	Պետրոգրադ	763
Փոթի	767	Խարկով	755
Պետրիգորսկ	730	Ցոմսկ	760
Թէմիրխան-		Տամբով	754
Եուրա	718	Ռիգա	
Վլադիկավկազ	708	Նիժնի-Նովգոր-	
Նալտա	765	րոդ	753
Հաշտարխան	770	Ղազան	759
Կովանդ	730	Սարատով	760
Տաշկենտ	736	Էրբաւա	765
Ստավրոպոլ	713		

Վ. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐԳՈՒ ԲԱՂԴԸ

Ով դու հայ ազգի տարաբաղդ որդի,
Վաղուց սպասում ես լաւագոյն բաղդի:
Շատ էլ ցանկանաս բաղդաւոր լինես,
Բաղդը չի գալիս, նա քեզ չսիրեց:

Շատ էլ պարապես, անխոնջ աշխատես,
Իմացող չկալ որ բան հասկացնես:
Էլի պիտ ասեն կոպիտ ու ծուլ ես,
Իսկ եթէ խօսես— կասեն թէ սուտ ես:

Շատ էլ կատարես կամքով բարի գործ,
Առաքինութեան դու անես շատ փորձ,
Էլի պիտ ասեն, որ կեղծաւոր ես,
Շնորհակալութեան դու արժանի չես:

Շատ էլ որ օգնես քո հարեանին,
Եւ եղբայրական պարտքդ կատարես,
Չարը խափանես ցանկանաս բարին,
Էլի թշնամի դու կը համարուես:

Շատ էլ աղատես հարեանիդ մահից,
Ձոհես պատիւդ, բժշկես ցաւից:
Էլի պիտ կրկնէ, որ ռիսերիմ ես,
Խըղճի ու գութի դու բաժին չունես:

Շատ էլ որ հանգցնես հրդէհը նրա տան,
Էլի պիտ ասէ նա ամենայն օր:
Քանդեցիր տունը, խաբեցիր նորան,
Յափշտակեցիր նրա կալքը բոլոր:

Շատ էլ որ խոր ջրից հանես խեղդվելով,
Պարտքը վճարես նորան խըղճալով:
Էլի պիտ կրկնէ, որ չահասէր ես,
Որ նրան աչկարա դու թալանել ես:

Շատ էլ որ ջարդվես հարեանիդ համար,
Կալքդ նվիրես ու կեանքդ զոհես,
Էլի համարձակ միշտ ու անդադար,
Պիտի որ կրկնէ՝ հաւատարիմ չես:

Շատ էլ որ սիրես ճշմարտութիւնը,
Եւ փառաբանես արդարութիւնը,
Քո հարեանը էլի պիտ ասէ՝
Հալ ազգի որդին համակրելի չէ:

Շատ էլ ցանկանաս բաղդաւոր լինես,
Բաղդը չի գալիս, նա քեզ չսիրեց:

Մ է ս է.

VI. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

IV. ԻՄԱՍՏՆԵՐ

— Ով իւր սխալները ծածկում է, ուրեմն նա դեռ ևս նրանց կրկնում է:

— Սխալները քրքրելով ու ուղղելով իզուր մամանակ ենք կորցնում, որը կարող էինք ճշմարտութիւններ գտնելուն գործադրել:

— Եթէ լուսահատում ես, նշանակում է, որ ոչ անցեալդ ես միտդ առնում, ոչ ներկայդ խորհում և ոչ ապագայդ նախատեսում:

— Ձայրացած ժամանակ հաշիււն նայելուն պէս, կը հասկանաս թէ ինչ կերպարանք ես բռնել:

— Մի որեւէ մէկին հարիւր անգամ ծառայութիւն կամ օգնութիւն արա, միայն մի անգամ մերժիր և հաւատացած եղեր, որ իր կեանքում հենց այդ մի մերժումն է որ միշտ կ'իշխի:

— Ոչինչ չունեցողն ու ոչինչ չտուողն, ոչինչ էլ չի կորցնի որ միշտ մեծահոգի լինի:

— Կեանքի մէջ երեք բան կայ, որի մասին, երբ հատնում և անհետանում է, անչափ ավստում են. դրանք են՝ դրամը, փողը և ջահելութիւնը:

— Ողբալ իր ջահելութիւնը, նշանակում է, ավստալ հենց այն գեղեցիկ կնոջ վրա, որը միշտ մեզ խաբել է ու շահագործել:

— Ճշմարիտ սիրույ և իսկական բաղձաւորութեան մասին շատերն են ճառում ու երազում, սակայն երջանիկ դրութեան հասնելուն շատ քչերին է լաջողվում ու վիճակվում:

— Կինը միշտ վերջը լաց է լինում այն բանի մասին, որի մասին նա առաջուց ծիծաղում էր:

— Կինը բնութեան գեղեցիկ սխալանքն ու սլակասութիւնն է:

— Միտք միակ չաղթութիւնը, միանշանակն նրա ճանկերից փախչելն է:



VII. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՐԻՐ ՏԱՐԻ ԱՊՐԵՆՈՒ ՄԻՋՈՑ

1 Աշխատիր արեւի ծագումից առաջ արթնանալ:

2. Անքուն չմնալ և ժամանակին հանգստանալ:

3. Որքան կարելի է բացօդեայ մնալ ու աշխատել:

4. Որքան կարելի է թոզից, դադրելուց ու քրտնելուց խուս տալ:

5. Պահպանել հոգեկան ամեն տեսակ հանգստութիւն և չզայրանալ:

6. Խղճի խաչից ղզուշանալ և անխառնութիւններ չգործ դնել:

7. Այսօրվայ գործդ էզուց մի զցիւր և ամեն օր վերջդ մտածիր:

8. Ոչ այնքան բարակ հանդերձներ հագիր, որ մրսես, և ոչ այնքան տաք հագնուիր որ քրտնես:

9. Ոգեւից բնականութեան ղզուշացիր:

10. Մարմնիդ մաքրութիւնը պահպանիր, յաճախ լուացուելով:

11. Ստամոքսդ մի բեռնաւորիւ բաւելով կերակուրներով, և աշխատիւ աշխի կաթեղէն ու բօսեղէն կերակուրներ գործածել:

12. Սենեակդ շատ տաք մի պահիր և այն էլ փայտով տաքացրու:

13. Շողոքորթներէց ու կեղծ բարեկամներից զգաստ կաց:

14. Ունեցածովդ բաւականացիր և հարկաւորութիւններից չափաւորիր:

15. Ժամանակին ամուսնացիր, ինչպէս և այրիանալիս նորից ամուսնացիր:

16. Ամեն մի յիմարի մի լսիր:

17. Առանց գործի մի մնալ:

18. Պարտք մի վերցնիր:

19. Ապերախտի հետ գործ մի բռնիր:

20. Գրուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ միշտ տաք պահիր:

21. Կերակուր ուտելուց յետոյ բերանդ ողորդիր ու առանքերդ մաքրիր:

22. Ցրտից ղզուշացիր, մանաւանդ քրտնած ժամանակդ:

23. Բնակարանիդ լուսամուտները միշտ դէպի արեւ դարձրու—չինիր:

24. Քաղաքի աղմկալից ու օդը վտանգաւոր միկրոօրներով լի կեանքից խուս տուր, մանաւանդ ամառը:

Այս կանոնները եթէ պատանեկութիւնից սկսած կարողացար պահել, հաւատացած եղիր, որ կարող ես ազատ մինչ 180—200 տարի ապրել, առանց ուրիշ օգնութեան ապահով, առողջ ու երջանիկ կեանք վայելել:

VIII. Բ Ժ Զ Կ Ա Կ Ա Ն

Վերաբերի բժշկականին

Սուր զործիքներից առաջացած վեր-
քերի դէմ, սկզբնական օգնութիւնը ու
ջանքը արինհոսութեան կանգնեցնելն
է, որի համար պէտք է աշխատել շատ
առը ջուր գործածել, որպէս զի արիւ-
նի անօթները շուտ կուշ գան։ Երբէք
(սանձիւ *) չգործածել։ Եւ պէտք է
վերքը լաւ զննել ու նայել որ վերքի
մէջ օտար առարկայ կամ աւելորդ իր
մնացած չլինի, որից յետոյ, վերքի ե-
զերքները միմեանց աւելի մօտեցնե-
լով զգուշութեամբ կապելու է։

Եւ երբ զործիքներից պատճառած
վերքերի դէմ, ինչուեղ էլ լինի, ծա-
կուած վերքը պէտք է աշխատել շուտ
ծածկել, որպէս զի այդ անցքով օդ չը
մտնի։ Այս դէպքում եւս առը ջուր
գործածելու է և հանդիստ դրութեան
մէջ մնալով, աշխատելու է չշարժուել։
Հրազէնքից պատճառած վերքե-
րի դէմ սկզբնական օգնութիւնը, վեր-
քը ուշադրութեամբ քննելն է և աչն
լաթի, շորի կտորի մաքրելն է, որոնք
գնդակի հետ մտնում են կաշու կամ
մարմնի մէջ։

Եթէ նկատուի է, որ վերքի մէջ
մտած գնդակը կարելի է մատով հա-
նել, պէտք է անմիջապէս աշխատել
զգուշութեամբ նրան հանել, իսկ եթէ

*) Իսանձիւ—այրած շորի, լաթի կտոր
է, որ արինհոսութեան դէպքում մեր
աւանդ ժողովուրդը սովորութիւն ունի
արինհոսութիւնը դադարեցնելու, չի-
մանալով թէ որքան վնասակար է այդ
միջոցը և թէ վերջը որքան արգելք է
լինում վերքի առողջանալուն։
Ե. Աշխ...

չի նշմարվում, չպէտք է աշխատել
փնտրել կամ գտնել, որովհետեւ ոչ թէ
միայն աւելի խորը կը մղէք նրան, այլ
և այդպիսով բժշկի դործը աւելի կը
դժուարացնէք։ Միայն վերքը ջրով
լուացէք և անընդհատ սառը կտու-
րէսներ դէք, մինչև բժշկի հասնելը։

Այլ ուսած վերքը՝ եթէ այրուած
տեղում դեռ վերք է գոյացել, անմի-
ջապէս սառը ջրում զննելու է, իսկ ե-
թէ որ և է պատճառով անկարելի է,
ծածկեցէք թրջած կտուրով, ձնով, սա-
ռուցով, թարմ ցիխով ու չետոյ քերած
կարտօփով պատեցէք։ Այս բոլորը իր
մէջ է քաշում տաքութեան մի մասը
և զովացնում այրած տեղը։ Իսկ եթէ
կաշին—վերնամաշկը արդէն բշտել է
պէտք է զգուշ մկրատով հեռացնել և
իւղալի օժանելիքներ գործածել, օրի-
նակ ձէթ, իւղ կամ ձուի սպիտակուց։
Ձէթն աւելի չարմար է։ Յետոյ վերքը
ծածկելու է բամբակի հաստ շերտով
ու լաթով կապելու։ Եւ դրանից չետոյ
հիւանդն իրան աչնպէս պէտք է պահի,
որ այրուած տեղը, կուշ եկած չմնայ,
այլ ձգուած լինի։

Պարիճի խածելու դէմ դեղ
Պարիճի խածելու դէպքում, վերքը
տաք ջրով լուանալուց չետոյ, տար-
խունը կամ խնձորի ծառի տերեղ ջար-
դած վրան դնելու է ու կապելու։

Գինովութեան դէմ միջոց
Պէտք է տալ մուգ սուրճ կիտրոնով
(լեմօնով) և կէս գինու բաժակ ջրում 15—
20 կաթիլ գոֆամեան կաթիլներ։ Գի-
նովցածի դուխն ու մէջքը ողնաշարի
երկարութեամբ թռչել սառը ջրով։

IX. Տ Ա Ն Տ Ի Կ Ի Ն

Փունաւոր ձուկը ճանաչելու
նշանները։

Փունաւոր ձուկը կարելի է իմանալ
— ճանաչել իրա ներսուած հոտից, ա-
տանների գեղնութիւնից, և աւելի նրա-
նից, որ երկու ժամանակ մաքուր ար-
ծաթի կտորը նրա ականջի խնուշ-
ներում խրելու դէպքում, մետաղի դոյ-
նի է փոխվում։

Սառած կաղամբը բարեփո-
խելու կերպը։

Սառած կաղամբը երեք ժամ ան-
ընդհատ զննում են ձնախառն սառը
ջրում, որից կաղամբը բոլորովին
թարմանում է։

Այն ապակէ տամնները, ո-
րոնք ժամանակի ընթացքում աղտոտ
մնալով գունատուել են, շատ հեշտու-
թեամբ մաքրվում են, եթէ դրանց
նախով լուանան, և չետոյ տաք ջրով
ողողեն։

Լուացքը մաքուր և հեշտ
լուանալու համար, պէտք է ամեն
մի դոյլ (վեդը) ջրին 5 մոխալ (դո-
լտնիկ) բօբաքո (буба) աւելացնել



X. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՅԱՏՈՒ ԿՈՎԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Լաւ կովի կաշին՝ փափակ ու առա-
ձգական է լինում, մանաւանդ ետքի
ու վզի կաշիները, տեսքը դեղնայիկ ու
կաղմուածքը բարեհաճ, բարակ ոսկրնե-
րով:

Կուրծքը՝ լայն ու դուրս ցցած, կրծի
երակները և կաթնաջրերը հաստ ու
ուռած են լինում: Սակայն ջահիլ կո-
վի երակները աննկատելի են լինում:

Մարմինը ու գլուխը՝ երկար, մանր
ու բարակ պոզերով, ոտները կարճ
մանր ու նեղ կազմով:

Կուրծք՝ մեծ ու երկարացած, ծած-
կուած մանր մաշկներով, որը կթելուց
լետոյ պարպուելով փոքրանում է ու
կախ ընկնում: Եթէ կուրծքը կթելուց
լետոյ չի փոքրանում աչդ նշան է որ
կուրծք մասլից է և թէ ճարպալից, ո-
րի պատճառով կաթ քիչ է տեղաւոր-

վում: Ջահիլ կովերը մանր պտուկներ
ունեն, ճիսկ մի քանի անգամ ֆնած ու
երկար ժամանակ կթուող կովերը ա-
ւելի զարդացած: Երկար ու բարակ
պտուկներն եւ լաւ նշան չեն: Կաթ
տուող կովի կաթնատուութիւնը իմանա-
լու համար, ամենահաստատը, պէտք է
երկու երեք օր կթել ու կշռելով իմա-
նալ նշատուած կաթի քանակութիւնը:
Իսկ կաթի լատկութիւնը պէտք է փոր-
ձել հեռեկալ կերպով: ջրալի կաթը
եղունդի վրայ կաթացնելուց, վրան չի
մնում, կամ ապակեայ ամանից թափե-
լուց լետոյ, հետք չի թողնում, ջրի համ
ու կապտագուն է լինում, ընդհակա-
ռակը թանձր ու խզալի կաթը, ամանի
պատերին թողնում է կաթնի սպիտակ
հետք, համը քաղցր է ու խղալի և ե-
ղունդի վրայ կաթացրած դէպքում
գնդակաձև մնում է առանց թափուելու:



XI. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

Պէնզանիների լղութեան տեղութիւնը:

Փիղը ծնում է	21 ամսից
Ընծուխտը (ժիրաֆ)	14 »
Ուխտը	12 »
Գոմէշը	12 »
Եղջը	12 »
Ձին	11 »
Ռնդեղջիւրը	9 »
Կապիկը	7 »
Պըջը	6 »
Կովը	5 »
Ուխտարը	5 »
Շյծը	5 «
Խոզը	4 »
Կողբը	4 »

Աւիւժը	100 օրից
Կատուառիւժը	73 »
Գայլաշունը	63 »
Ուղուէտը	62 »
Կոտուխ	55 »
Կարապը	42 »
Թաթակը	40 »
Առնետը	31 »
Բազը	30 »
Սազը	30 »
Ճագարը	30 »
Մուկը	28 »
Հնդկահաւը	28 »
Հաւը	21 »
Գեղձանիկը	14 »



XII. ԱՐՈՒԵՍՏ

Թանաքի բժի ոչնչացնելու հնարք:

Պրպէս դի Թանաքի բիծը կամ Թանաքով զրուած ստորագրութիւնը ոչնչացնուի, պէտք է ամենից առաջ Թրթնջուկ (шавельн. кислота) Թրթուտի Թեթէ լուծուածքով կամ հենց կիտրոնի և ազաթթուաւով մաքրել, Այս Թթուաւները լուծում ու գոյնափոխում են Թանաքը, չփչացնելով իսկական Թղթի վրայ տպած տպարանի մուրը:

Գողպատէ իրեղէնները շատ լաւ մաքրվում են, եթէ դրանց մաքրեն վարդագոյն քերպին (розовымъ Эдкимъ) սապոնով և ապա հարուեն ու օղողուեն:



Արճճէ և Թիթեղէ իրերը զործածուելուց զուեաւում լինելով, շատ հեշտութեամբ են մաքրվում, եթէ շատ Թանձր տարաֆինով (парафинъ) և սապոնով հարուեն:

Սենեակում պահուելիք բոլորի հոգից օրգերը հեռացնելու միջոց. — Պէտք է լայն ա խորը ամանում լըցրած սառը ջրում լուծել մի փոքր քանակութեամբ ալրուած կիր. և լետոյ ծաղիկների օրգերով լի ամանը, մինչև զվտի բոլորքը խորասուղել. — Ընկղմել կրի լուծուածքում: Այսպիսով 5—6 ժամից, ծաղկամանում զտնուած բոլոր օրգերը հոգի երեսն են դուրս հանուած, օրոնց հաւաքելով հեշտութեամբ կրելի է ոչնչացնել:

XIII. ԳԻՒՏԵՐ

ԽԵՂԴԻՉ ԳԱՋԵՐ

Գործող բանակից Պարտգրադ է վեջադարձել Վ. Վ. Ժուկովսկի, որ անձամբ ականատես է եղել զերմանացիների նոր մղձաւանջալին ղէնքի՝ խեղդիչ զաղերի ներգործութեան:

— Սա, — պատմում է Ժուկովսկին, — տեսա՛յ խեղդիչ զաղերի ներգործութեան պատկերը հէնց հետեւեալ օրը, երբ զերմանացիները զործադրութեան էին զրել իրանց ղէնքը: Սա Գուչկովի հետ շրջեցի առաջին բանակի ճակատը Բոլուրա և Բալկա դետերի մօտ: Խեղդիչ զաղերի ներգործութիւնը չափազանց ծանր է, որովհետև զաղերը ներգործում են և խեղդելու մտքով և՛ արիւնը վարակելու մտքով, ըստ որում ներգործում են խիստ տարբեր կերպով, նաչած մարդու անհատականութեան: Այդ նոր տերիչ միջոցի պատճառած ֆնասները բուժելու համար բժիշկները զործ գրին ամէ՛ տեսակ միջոցներ, Օգտվեցին նշաղրով աբիւն բաց թողլին և սրսկեցին ֆիզիօլոգիական հեղուկ: Ընդհանրապէս բուժման միջոցը տակաւին չէ գտնված, բայց նրա առաջն առնելու միջոցը հաստատված է: Բանը նրանումն է, որ զաղերի ազդեցութիւնից պաշտպանվելու համար պէտք է օգտվել որեւէ հեղուկով, աւելի լաւ է սօդալուի, որը կլանում է զաղերը: Զրուած լուծած սօ-

դայ՝ մէջ պէտք է Թաթախել սպունդ կամ բամբակ և մօտեցնել հիւանդին: Այսպէս է ընդհանրապէս զաղերի ֆիզիօլոգիական ներգործութիւնը, որ ալրուածք է առաջացնում կոկորդում, Թոքերի մէջ և գլխապտույտ պատճառում: Գաղերի պատճառած ցաւերը խիստ դժման են: Մարդիկ շարունակ խենթի պէս լալիս են ցաւից, որովհետև ցաւը օրտին էլ է ներգործում:

Խեղդիչ զաղերը պատճառում են առաւել շատ անախանքներ, քան ամենաճանաչվեքքերը: Շատ ծանր է զաղերի ֆնասակար ներգործութիւնը նաև չոր եղանակի, որ չոր տարածութեան մէջ խեղդիչ զաղերը կարող են քնալ երկար ժամանակ և տարածվել բաւական մեծ տարածութեան մէջ:

Խեղդիչ զաղերի նշանակութիւնը կայանում է գլխաւորապէս նրանում, որ դրանով մարդիկ են ընկնում շարքերից: Սակ նրանց ֆնասները, չը նուաճած տաժանելի լինելուն, առանձին ուժով "չքի չեն ընկնում: Դրանով մահադութեան զգալները 15%-ից չեն աւելանում:

Այնու ամենայնիւ մեր Թշնամիների նոր միջոցը իր արտաքին ներգործութեամբ և ֆնասաբեր հետեւն ընկնող խիստ ծանր տպաւորութիւն է թողնում:

(ԵՐ. Մ Յ)



† ԿԱՆԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՄԿՐՏՁԵԱՆ

1915 թ. նոյեմբ. 18-ին զիշերը Բաղուս ի Տէր հանդեսու Դամախու թէմի առաջնորդ, լատինի Աստուածաբան Կարապետ եպիսկոպոսը, որը ծնուել էր 1866 թ. մարտի 17-ին Գողթնեաց Յղնա գլխու: Հանդուցեալը, Նուխում առետուրով պարապող խեղճ ընտանիքի ղօկ Մարտիրոսի որդին էր: Սկզբնական կրթութիւնը իրանց գիւղի դպրոցում ստանալով, 12 տարեկան հասակում Զաքարթալի դպրոցի հոգաբարձութեան խնդրագրով 1880 թ. ընդունվում է Էջ-

միածնայ ձեմարանը, որտեղ աւարտելով իւր ուսումը, Մաղաքիա Օրմանեան սրբազանի խորհրդով ընդունում է հոգևոր կոչում և 1889 թ. Ներսէս Խուղալերդեան եպ. ստանում սարկաւազութեան կոչում: Մակար կաթողիկոսը ուղարկում է Եւրոպա, որտեղ լուսարէն, եբրայեցերէն, անգլիերէն, լատիներէն և ասորերէն լեզուները ուսանելով, և զերմանացի նշանաւոր Աստուածաբաններին աշակերտելուց իր ղխերտացիան հրատարակելով ու գովադարութեան աստիճան ստանալով, անցնում է Աստրիա, Ֆրանսիա և Անգլիա այնտեղի կրօններն ուսումնասիրելու:

Եւրոպայից Պօլսով անցնելով Աւմաշու վանքն է այցելում և Էջմիածին վերադառնալով ձեռնադրվում վարդապետ, կարգվում տեսչի օշնակսն ու «Արարատի» խմբագիր: Ապա Երևանի, Ատրպատականի ու վերջը Դամախու առաջնորդութեան պաշտօնները վարում: Սոյն նոյեմբերի սկզբներին հիւանդանանալով, անցաձող անդամահատութիւնից Բաղուս մահանում դեռ ևս 50 տարին չըրորած:

Հայ աղգը ու հայ հասարակութիւնը լանձին Կարապետ եպիսկոպոսի կորցրեց բազմաթիւ առաւելութիւններով, գիտութեան պաշարով օժտուած, նախնի թարգմանիչներին նմանող ու հետևող, իսկապէս ժամանակի թարգմանիչ ու լեզուադէտ Աստուածաբանին, որին դեռ շատ կափտասալ և որի տեղը դեռ չառ բաց կմնալ:

Թողնելով նրա մանրամասն կենսագրութիւնը գրելու իր շնորհալի ընկերներին ու աշակերտներին, այստեղ հարկ եմ համարում մէջ բերել նրա կեանքի ընթացքում ճակատագրական այն անբացատրելի գէպքերն ու հանգամանքները, որը տեղի են ունեցել նրա պաշտօնավարած տեղերում, օրինակ. ինչպէս նրա մանկական կեանքը աստանդական է եղել, այնպէս էլ հէնց նրա առաջնորդութեան ժամանակներին հայ ժողովրդի կեանքը լի են եղել արկածներով ու թշուառութիւններով: Երեանում—հայ-թրքական ընդհարումները տեղի ունեցան. Ատրպատականում—Շահին աքսորելու, Սատթար ու Նիւրեմ խանի խառնակութիւններն, Իսկ Դամախում—նեղիւ պատերազմի արհաւիրքներն և աղէտալի գաղթականութիւնը ու նրանց պատսպարելու դժբերը, որոնց ամենին աչալուրջ Առաջնորդը—եռանդուն գործունէութիւն ու օշնութիւն էր ցոյց տալիս:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



† ՍԵՂԻԱԿ ՄԱՆՈՒՅԵԱՆ

Նոյեմբերի 28-ին գիշերը 1915 թ. վախճանուեց 72 տարեկան հասակում հայկական մանկավարժութեան հայր Սեղբակ Մանուկյանը, որը 20 տարուց աւելի տառապեց ու տանջուեց զժնդակ տեսակ «կղեմա» կոչուած հիւանդութիւնից:

Հանգուցեալը ծնուել էր Թիֆլիս, և Ռուսաստան բարձրագոյն ուսումն աւարտելուց լետոյ, Գերմանիայի Հելդրիբերգի համալսարանում, լատինի Հերբարտի աշակերտներից պատրաստուեց մանկավարժութեան:

Արտասահմանից վերադառնալով ճանապարհորդեց Հայաստան և լետոյ ընդմիշտ իւրան նուիրեց մանկավարժութեան, յորինելով ու հրատարակելով մի շարք դասագրքեր:

Պատանեկութեան ժամանակ մասնակցում էր և թատրոնական — Զմշկեան-Ամերիկեան խմբում:

Գրականութեան մէջ նաև լաճախ լոյս էին տեսնում, մանաւանդ «Արձագանքում» ու «Արարատում» նրա հետաքրքիր ու հմտալից լուսաւոյնները մանկավարժութեան ու հասարակական հարցերին վերաբերեալ: Հանգուցեալը, օրինակելի ուսուցչական ու տեսչական պաշտօններ է վարել Էջմ. ճեմարանում, Թիֆլիսի, Երևանի ու Շուշու թեմական դպրոցներում:

Աչքի առաջ ունենալով, որ հայ մանկավարժութեան պապը, միշտ շարք — մի ամբողջ սերունդ աշակերտներ է կրթել, որոնք նրա հիւանդութեան ժամանակ ոչինչ օգնութիւն չեն հասցրել, ուստի, (ինչպէս «Գեղարուեստական սալոնում» ևս արտայայտեցի) ցանկալի էր, որ նրա աշակերտները, մանրամասն նրա կենսագրութիւնը պատկերով ու կաքուր լաւելուածներով հրատարակէին և դրանից դուրս գալով իրանց երախտագիտական զգացմունքն արտայայտելով, մի համեստ մահաբճան կանգնեցնէին: Որով ոչ թէ միայն հանգուցեալի վշտակիր ընտանիքին, աւելորդ ծախքերից կազատէին, այլև իրանց սրբազան ու բարոյական պարտքը կատարելով երկարամեակ տանջուած շնորհալի ուսուցչապետի լիշատակն ընդմիշտ կլաւերժացնէին:

Մ. Գ.

ԹԻՖԼԻՍԻ ԽՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865 թ. ԵՒ ԳՌՕՑԻՏՂԱ
ՄԻՆԱՍԸ

(Իմ լիշողութիւններից)

Ուղիղ լիստուն տարի սրանից առաջ էր:

Մենք այդ ժամանակ ալլես Թիֆլիսի «Խարփուլ» կոչուած թաղամասում չէինք բնակուում, այլ 1863 թուականից միքանի տարով— ժամանակաւորապէս բնակութիւն էինք հաստատել Նաւթուլում, ախտեղի գինեւորական հիւանդանոցին մթերքներ մատակարարելու համար, չորս վերցրած կապալի պատճառով:

Ես այդ ժամանակ թէև 10—11 տարեկան մի դեռատի պատանի էի, սակայն սովորած լինելով շատ ազգային երգեր, երգում էի իմ այդ ժամանակ ունեցած լաջող և զիւ ձայնովս, որի պատճառով մեծ մօրաքրոջս ամուսին Զ. Գրիգորեանցի հայր Թովաշեանց Պետրոսը երբ հիւր էր գնում, շատ անգամ ինձ տանում էր երգելու:

Մի ամառուան օր, Թովաշեանց Պետրոսը, որին ես միշտ «Աղա» էի կանչում, ինձ իրեն հետ տարաւ «Օրթաճալ», որտեղ ինքը ճաշի էր հրաւիրուած:

Այդ օրը 1865 թուականի լուսիս ամսուայ 28 էր, օրը կիւրակի: Թէ ինչպէս անցաւ ճաշը կամ ովքեր էին հրաւիրուած ճաշին մասնակցողները, այդ բոլորը թողնելով, նպատակաւորմար եմ համարում մ միայն, ախտեղ այդ օրը—օրուայ նորութիւնների մասին խօսակցութիւնը հետաքրքրութեան համար մէջ բերել ալտեղ:

Այս էլ պէտք է ասել որ այդ ժամանակ հաղիւ էր անցել մի տարի, ինչ որին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւի-վիչը նշանակուել էր կովկասի Փոխարքայ:

Իսկ Թիֆլիսի քաղաքապետիւր վաթսուեանկան թուականների գործիչներից, երկար ժամանակ Արեւելք—Հնդկաստան, Պարսկաստան, Աբաբիա և Տաճկաստան ու Եւրոպայ ճանապարհորդած, զբաղէտ, լայնի Գալուստ Շերմազանեանն էր: Սրա օգնականը՝ որ Թիֆլիսի չուկայի կռուավարիչ էր՝ «բազարնիկ» Բաթբեկովը:

Քանի դեռ բոլորը հրաւիրուածները չէին հաւաքուել, թթան ծառի տակ նստածների մէջ հետեւել խօսակցութիւնն էր շարունակուում, որը ես ականջներս լարած ուշադրութեամբ լսում էի:

—Էս ինչ հալն է գցի մի գողալ քաղաքը դաւաւէն,—ասում էր Պապինի-տղա Վանոն,—էրկու դրվանքէն մէ շալով միս էինք առնում, հիմի 4—5 կապիկ ին չինի. 10 ձուն մէ շալի էր, հիմի 6—7 է. իրիք շալով լաւ արթար երդ էինք առնում, հիմի հինգ-վից շալի է դառի, իրիք շանուց խիզիւլէն վից շալի ին չինի. հալբաթ կու նիղանան խալիսը, բաս ինչ կօնին *):

—Վանօ ջան. Վանօ,—ընդհատեց Լմինինց Եովանէն,—հինգ ջուլետ մինձ-մինձ գիղաքունիքը մէ աբասով քանի ջէր ինք առի:

—Էտ ուր իս ասում,—շարունակեց Պապինի տղէն,—էն մարտ ամսուայ բռնած թարթի դօշիբը վուր գրուանքէն երկու շալով առնում էինք ու իրկտում, վուղձ մսթրաթը երդով լքցւում էր: Հացը էրկու կապիկ էր, շատ վուր թանգացիլ էր էրկու գրուանքէն մէ շալի, էն էլ աճը տուող ու սպիտակ Գուռուկու ու Շորագալու ալբեմէն: Գինին չօ թուրգին իրիք շալի, ան մէ աբասի, ինչքան Գուղիս խմէ, անարատ գինի, հիմի կի վից շալի ին չինի:

—Առաջ մէ մանէթով, ասում էր Սհանջանինց Աւետիքը,—էնէնց քոք ոչխար կուաւնէինք, վուր չուրս տուն փալ կօնէինք, էրկու օր եօլլա կերթէինք, հիմի կի մէ մանէթը մէ օրը մէ օջախի հերիք չէ գալի:

—Էրեդ մէլընումը խալիսը խիտ էին ղնամիշ անում գաւաւին ու իրա բազարնիկ Բաթբեկովին, գրանց գլխին մէ գել կու ձնին,—մէջ ընկաւ Գէմշունց Սհանէղը:

—Գրանց ճաշը մէ լաւ վուր էփին, խիտ լաւ կուլի, էսէնց թանգութիւն կուլի վուր գցիլ ին,—առաջ եկաւ Զառափ Կակօն,—քաղաքը դրանք ին քանդում, հիմի էլ ասում է թաղա «տակաս» ին ուղում ղնի ուտելէղէնի վրայ, շներու, ձիաներու, էշերու, գուռն ու աղօզի վրայ էլ նուր-նուր խարջիր ին ուղում բարցի, հալբաթ վուր խալիսը դումաղալ կօնէ: Էս միւր մուքթա-խորոմ իմերէլնիրն էլ հօ հէնց մէ մահանի ին միում, վուր մէ դալմաղալ սարքին. պարապ-սարապ ման ին գալի, ճանգնիրը մէ բան էգէրա գցին:

Երբ ճաշը վերջացաւ, ըստ աւանդութեան, սովորական «ախաւի սուփրէն» արդէն Քուռ գետի ափին պատրաստ, տղերքը զու-

*) Այդ պարոնները եթէ այժմ տեսնէին քաղաքի «տակասն», որ «խիզիւլէն»—խաւարը 3 ուրբի է, շատ հետաքրքիր կ'լինէր թէ ինչպէս կ'հիասթափէին ու կապէին:

նով քէփը երբ նորից չաղ էին արել, հէնց ալդ ժամանակ քսփ ու քրտնքի մէջ մտած ու շունչը կտրած, լեղապատու ու ներս մտաւ Նազարէզինց Թօմէն, և աչքերը աջ ու ձախ պտտացնելով սկսեց պատմել հետեւեալը.

— Վահ, վահ, տօ տնով քանդուածներ, քէփի վախտ իբր զթի՞ կորանք, գնացինք, քաղաքը վուղճ իրար է ննդի, դէ՛ս պրծէք գլխը՝ ներուդ չարէն տեսէք: Միր գօղալ քաղաքը մէ տեսէք թէ ինչ օրումն է, է:

Միանգամից գուռնան լուց և անմիջապէս բոլորը շրջապատուեցին Նազարէզեանի շուրջը՝ լսելու բօթաբեր լուրը, բացականչելով՝

— Ի՞նչ է, ինչ է պատահի:

— Էլ ինչ, քաղաքը «մէօրէթ մօսվա է» (օրհասի տակ է):

— Աղբաթի խէր, պարզ ասա, վուց:

— Փաղքումը մինձ «բունտ» է, իս գիղէի վուր դուք էստի իք, էկալ վուր ձիղ չթողնիմ տիղերեմէղ ժաթ դաք, քէփով իք, ճամփին մէ բան չպատահի:

— Վահ, էստի էս գիղեր վուց միանք, բաս միր տները, միր

օղլուշաղը, բացականչեցին բոլորը միասին:

— Դիփ ճամփիքը կապած է, — շարունակեց բօթաբեր Նազարէզեանը — կազարմեքէմէն զօղունը դուս է էկի, հարկաւոր տեղիքը կանգնած է, Մէլդնի էրկու, ու Վարանցովի կարմնջնէրու էրկու գլխին էլ զարբաղնիր է գարսած, խալխին չին թւղնում վուր էս ափէմէն էն ափն անց կենան: Խալխը զօռով ուղում էր անց կենալ, համա էրկու դարփա վուր գուլլա դարտկեցին, միքանի հոգի խարաք էլաւ, շատիրն էլ ետրալու դառան, սրա վրայ էլ ոչով սիրտ չէ անում առաջ գնալ, զալմաղալը կի քանի գնում է աւելանում:

— Բաս դուն վուց էկար:

Տասը հօքի էինք, վուցոր էլաւ Սուրփ Սարքսի վերի թաղի քուչերէմէն հասանք Օրթաճալա, — շունչը ընդհատելով պատմում էր Նազարէզեանը:

— Իժում:

— Իժում, էստի ճամփին էլ միկիտնեմէն խմցալ, վուր Կօլօթաղումը դալաւի վուղճ տունը քարուքանդ ին արի, քարը քարի վրայ չէ մնացի: Սարք ու կարքը կոտորիլ ին, քուչէն չպրտե-

գօղալ գրքիրը քուչէն ածի. քամու հիտ թղթիրը քչուիլ է ու քուչէքը փռուի, իրան էլ շատ ին ման էկի վուր սպանին, չին գթի, իմացիլ ին վուր Ալէքսանդրէ Թալիրովի տանը հրաւիրք է, էնղի կուլի. էտղանց հարալ-հրուցով, հասիլ ին Թալիրովի տունը, ուզեցել ին վուր էդ տունն էլ քանդին, պահանջիլ ին գալաւին վուր դուքս գալ, շատ ին ասի վուր էստի չէ, խալխը չէ հաւատացի, համա վիրջը Առաջնորդը Սարգիս արքեպիսկոպոսը ինքը բալկօնն է դուս էկի, իր կարդով երդուիլ է, թէ էստի չէ, վուր նոր հեռացիլ ին: Ատում էին, թէ գալաւէն Թալիրովի սարգափումն է թաղկացած էլի:

— Իժում, իժում. — հետաքրքրուելով և խմած գինու ազդեցութիւնը գլխներիցը դուրս հանելով միաձայն հարցնում էին:

— Իժում, էտղանց կատղած խալխը թուչ գնում է Կուկիա, Բաթթէուքովի տունը. նա կողքի ասն կտիրն է բարձրանում, ուզեցիլ է ծլկուի, համա վուց է էլի, խալխը տեսիլ է, հասիլ է կտրեմէն դէվեր է գցի, գլուխը հէնց փողոցումը գորգալածով ջնջխիլ է:

— Էդ խալխը ովքեր ին էլի:

— Ով ասիս, քիչ գօռացնողներ կան. միր խալխին էլ մէ հուչ է պակաս:

— Դրանց գլխաւորն ով է էլի:

— Ասում ին, Կօսի տղալ Մինասը, վուրը ձիու վրալ նստած հրամաններ է էլի տալիս:

— Հիմի վուր էկար, Մնացականովի կարմունջը բաց էր թէ կապած, — հարցրեց Թոփալենց տղէն — Աղէս:

— Չէ, հիմի էստի վուցիչ չկէր, համա էստի էլ ինչ կուլթողին վուր խալխը, Հաւաքարն ու քաղաքը միանան, կուկալին:

— Իս պիտի գնամ, առուտեհան Նաթլուխի «վօլպիտումը» պիտի ըլիմ, խիստ հարկաւոր գուրծք կալ, դէ՛հ, մնաք բարով, — ասելով և իմ ձեռքս բռնելով Աղէս ասաց:

— Դէ՛հ բալէս, արի շտապենք գնանք:

Ամենքը միտքերան խնդրում էին, որ չգնանք և մինչև այդու դուռը ճանապարհելով մեզ պատուիրեցին, որ «Դոլաբաւոր» կոչուած վտանգաւոր տեղում (Հաւաքարի և Նաթլուխի ալն ժամանակաւ ճանապարհի մէջ գտնուած տեղում) զգուշ անցնելու և մեզ երկու աջգնայանով ճանապարհ գրին:

Երբ անցնում էինք Օրթաճալու նեղլիկ ու աստանուող կա-

